յատկապէս այգիների փոխարէն գոհացնել, մանաւանդ որ նը-
բանցից չատերը միայն դրանցով են ապրուստ ճարում»։ Նոյն
Սուվորովը 30 յուլիսի 1778 ամի զեկուցանում էր Ռումեանցև-
Զադունայսկի կոմսին, թէ «Քրիստոնեաների գերագոյն փափագն
այն է, որ նրանք միասին և արդիւնաբեր տեղերի վրայ բնա-
կեցուին... Նրանք ցաւելով են թողում իրենց հայրենի անչարժ
կայքը· ուստի ես ստիպուած էի խոստանալ հէնց այստեղ վար-
ձատրել նրանց արքունի դանձարանից, ապա թէ ոչ՝ չէին յо-
ժարուիլ դուրս գաղթել»։

Սուվորովի զեկուցմամբ Հայոց գաղթումն սկսուեցաւ
1778 թ. յուլիսի վերջին օրերը։ «Փառք Աստուծու», գրում էր
նա. գաղթականութիւնն սկսուել է»։ Նոյն թուականի օգոստոս
ամսին հայերը Մարկոսեան Պետրոս վարդապետի առաջնոր-
դութեամբ նոր հայրենիքի սահմանը մտան։ Բայց այդ տեղ
առաջին իսկ քայլափոխին ամեն տեսակ անսպասելի աղէտներ
պաշարեցին նրանց... Եկատերինէի փոյթն և Պոտեմկին իշ-
խանի ու Սուվորովի նման աշխատակիցների ջանքը՝ ըստ կա-
րելոյն չատ դիւրութիւններ տալու Ռուսաստան գաղթող ե-
կուորներին՝ կարծես թէ համակրութիւն չէին գտնում բնակու-
թեան համար որոշուած տեղի մերձաւոր իշխանութիւնից։ Ոչ
միայն բաւարար պարէն ու տեղափոխութեան միջոցներ չէին
պատրաստուած, այլ մինչև անգամ երկրի այն մասերը չէին
սահմանուած, ուր որ նորեկները պիտի նստէին։ Գաղթական-
ները Եկատերինոսլաւ և Սամարա (արդի Նովոմոսկովսկ) հաս-
նելուն պէս ստիպուեցան կանգ առնել և այդ տեղ բացօթեայ
մնալով, առաջին անգամ ծանօթանալ մինչև այն ժամա-
նակ իրենց անյայտ հիւսիսային ձմրան խստութեան հետ, որ
նրանց չար բախտից, մանաւանդ այն տարին, առանձնապէս
խիստ էր։ Հայերի կրած տառապանքն անհնարին է նկարա-
գրել. սառնամանիքը, ցուրտն ու հիւանդութիւնները նրանց թի-
ւը կիսով չափ նուազեցրին. չատերը ցիր ու ցան փախան,
չատերն էլ, որոնց հետ և Պետրոս վարդապետը, նոյն իսկ թուա-
կանին մեռան։ Մնացածները՝ գարունը հասնելուն պէս սիրտ
առին Սուվորովին դիմելու։ «Երբ մեզ Ղրիմից դուրս հանեցիք»,
գրում էին նրանք 18 ապրիլի 1779 ամի, «հաճած էիք, բացի
յայտնի 14 յօդուածներից, խոստանալ մեզ, թէ մեր թո-
ղած տների փոխարէն՝ նրանց նման չինուած տներ կըտրուին
մեզ, տեղերը մեր ցանկութեամբ կորոշուին, թոչակն ու պա-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան